

եղբարք », (Զեհնոր էջ 35), իրենց հատուածողն կու գան առ վաղարշակ. « և նա ետ նոցա զերկիրն « Տարոնոյ... շինեցին քաղաք և կոչեցին վիշապ » : Այս մասին կը խօսիմք ապա Դիւցարանութեան մէջ :

Այս անհատնում՝ ալեաց անվերջ ելևէջն երբ դադար առած է արգեօք 'ի Հայս :

Շարայարեղի

ՇԻԳԱԿՈՅԻ ՄԵԾ ՑՈՒՑԱՎԱՆԴԵՍՆ

Շիրակոյի Աշխարհաշինութեան՝ որ պիտի միացնէ հիմ աշխարհը մորիմ հետ՝ բոլոր իր մտաւորական յառաջնադասութեամբք, ամտարակոյս մեծապէս շահագրգիռ է ամէմ փոքր 'ի շատէ զարգացած ամօի համար : Ուստի այն մեծ և օգտաշատ համդիսին մերկայ չեղողներում փափաքը լեցնելու համար պիտի հրատարակենք ակամատես եղող մեր Շիրակոյի թղթակցին Մեծ . Մամաւեամի շարք մի յօդուածները, որ ամբողջ իր ճարտար գլխով և մուրք ճաշակին համեմատ, պիտի մերկայացնէ ըմթեցողաց առջև ամոր իսկատիպ և գեղարուեստական համապատկերը, յորում կը յուսամք թէ ազգային ևս իւր մեղ՝ բայց մշամակալից տեղին կ'ունենայ : Մեր խրախուսմաց հետ՝ շնորհակալքմ ևս յայտնելով յիշեալ թղթակցին, կը յամօմնք որ գիտից և գիտութեանց կարգաբանութեան համեմատ գրելը դասաւորելով, — կամ ինչպէս ինքը կ'ուզէ, — ամոր եզակամութիւն ևս մասմատր կերպով դուրս ցաթկեցնէ, համառօտելով միամզամայն բացմամ և փակմամ առթիւ մեծամեծ ամծամք ճառախօսութեանց իմաստմ՝ այն համրային ցուցահամդիսի մասին :

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ուսանողաց ծանօթ ըլլալու է սոյն մեծ հանգիսին նշանակութիւնն, վասն զի սա պիտի յիշատակէ աշխարհի ամենամեծ անձնաւորութեանց միոյն մեծ գիւտն եւ գըտողին անգերազանցելի հանճարն : Երբ ի լոյս ենք, զիսաւար երեւակայել եւ գոռարին է եւ տհաճելի լուսաւորութեան եւ գիտութեան այս պայծառ ժամանակի մէջ գոռարին է երեւակայել թէ մարդիկ ինչպէս ագէտ, ու կոյր էին եւ չգիտէին խորհիլ թէ աշխարհս գնդաձեւ է եւ թէ արեւեկեան ցամաք եր-

կիրք, եւ ուղէանք իրենց լրումն ունին արեւմտեան այլ ան-
ծանօթ երկրաւ մը: Նախախնամութիւնն այս գիւտն Քոլումպոսի
պահած էր, Քոլումպոսի՝ որոյ երեւակայութիւնն այնչափ վառ էր
եւ որոյ գիւտն այնչափ անգերազանցելի եղաւ, որչափ նորա հան-
ճարն մեծ, եւ յարատեւութիւնն եւ կորովն անօրինակ եղած են:

Շիգակոյի աշխարհահանդէսն պիտի յիշատակէ Ամերիկայի
գիւտն ի Քոլումպոսէ: Ճիշտ չորս հարիւր տարիներ անցած գնա-
ցած են ի ծոց անհուն ժամանակի, յորմէ հետէ Քոլումպոս ոտն
դրաւ Արեւմտեան ցամաք երկրի վրայ. սակայն այս անցեալ չորս
դարուց մէջ սակաւիկ մ'իսկ նուազած չէ Քոլումպոսի անմահ յի-
շատակն, եւ մարդկութիւնն այսօր առաւել երախտաւոր կը զգայ
ինքզինքն առ Քոլումպոս քան երբէք. վասն զի ներկայիս բարձր
քաղաքակրթութիւնն է՝ որ բարւոյ շահագործած է Քոլումպոսի
գիւտն, եւ զայն մարդկութեան մեծագոյն բարեաց մին ըրած է:

Այս որպէս եւ այլ հանդիսից նպատակն է երկրին ձեռագոր-
ծական, երկրագործական, կրթական եւ գեղարուեստական
գործոց նոր ուղղութիւն եւ զարկ մը տալ, թերին լրացնել,
լաւն լաւագոյն ընել, եւ ամէն ինչ ի կատարելութիւն մղել:
Ամերիկա պէտք ունի այսպիսի մղման մը: Ընդհանուր կարծիք
մ'է թէ Եւրոպայի ձեռագործական, եւ գեղարուեստական ար-
հեստք յոյժ գերազանց են քան Ամերիկեանք, եւ շատեր զԱմե-
րիկա երկրագործական երկիր մ'եւելթ կը համարին, եւ անտի
բնական արտաբերութիւնք միայն կ'ակնկալեն: Սակայն Եւրոպա
շատ յառաջ չէ այսօր ազգային եւ քաղաքակրթական մրցմանց
ասպարիպին մէջ, եւ դժուար չէ խորհիլ որ Ամերիկեան ներկայ
երիտասարդ եւ կորովի քաղաքակրթութիւնն՝ վաղ յառաջնայ
եւ գերազանցէ զԵւրոպա, ուր շատ են անկաշկանդ յառաջդի-
մութեան արգելք: Ամերիկացիք մեծաշնն կ'աշխատին գերազան-
ցել հին քաղաքակրթութիւնն նոր ոգւով եւ ուժով:

Նոքա որ պիտի այցելեն Շիգակոյի Քոլումպեան Աշխարհ-
հանդիսին (Worlds Columbian Exposition), քաջ պիտի տեսնեն
այն յոյժ նկատելի զարգացումն ի ճարտարապետութեան, ի մե-
քենագիտութեան եւ ի գեղարուեստ, զոր Ամերիկացիք յայժ-
դած են ի ձեռս բերել անցելոյն մէջ: Քամանակէ մ'ի վեր նկա-
րողք սկսած են առաւել եռանդեամբ նկարել, երաժիշտք՝ բարձ-
րագոյն հեղինակութիւններ 'ի յայտ բերել եւ ճարտարապետք
նոր իմն եռանդեամբ գործել: Անցեալ հոկտեմբերի հանդիսին
նաւակատեաց առթիւ երգուած գուսաններգութիւնն Ամերիկացի
երգահանի մը նոր գործն էր, եւ Մ. րիլլըտ Հընդ եւս որ
ծրագրած է վարչական շէնքին յատակագիծը, Անգլիոյ թա-

գուհւոյն մասնաւոր շնորհաց արժանացաւ ըստ թելադրութեան Անգղիական ճարտարապետական կաճառին, եւ ստացաւ ճարտապետաց տրուած մեծ պատուանշանն: Մը. Հընդ առաջին Ամերիկացին է որ արժանացած է այսպիսի մեծ պատուոյ:

Հանդիսին գլխաւոր շէնքերն են հետեւեալք, ի բաց առեալ կառավարական եւ նահանգային շէնքեր:

1. Վարչութեան շէնքն. 2. Ծաղկաբանարանն. 3. Կանանց շէնքն. 4. Զինաբանական շէնքն. 5. Երկրագործական շէնքն. 6. Փոխադրութեանց շէնքն. 7. Հանքաբանական շէնքն. 8. Մեքենագիտական շէնքն. 9. Զեռագործութեանց եւ գրական արուեստից շէնքն. 10. Ելեքտրագիտական շէնքն. 11. Գեղարուեստից շէնքն. 12. Ցեղաբանական շէնքն: Ասոնցմէ զստ կայ յոյժ մեծ թիւ մը կառավարական շէնքերու, այլեւայլ ազգաց գիւղային տեսարաններ, շուկաներ, եւ այլն: Ասոնց ամէնուն վրայ յետոյ պիտի գրեմ:

ԱՇԽԱՐՀԱՆԴԻՍԻՆ ԴԻՐՔՆ

Հանդիսին յատկացեալ վայրն ես անձամբ այցելեցի երկու տարի առաջ, երբ գեռ ոչինչ չկար հոն: Միշիկըն լճին գեղաժիւծաղ ափանց վրայ Շիգակոյի հարաւային ծայրին մօտ կայ գեղանկար դարաստան մը, Ճէկսըն փառք. ասոր յարակից կար ընդարձակ չգործուած գետին մը խոպան եւ ամալի: Այս գետինն տեսնողին յիշել կու տար թէ Շիգակո ինչպիսի գրից մէջ էր իբր 60 տարի առաջ, Կոյտ հողակոյտերն իրարու կը յաջորդէին, եւ հոս ու հոն կային գեռերու կոյտեր: Այժմ անոնց տեղ բարձրացած են հոյակապ եւ պալատակերպ շէնքեր ի փառս եւ ի պարծանս ամերիկեան քաղաքակրթութեան եւ ճարտարապետութեան:

Ամբողջ հանդիսին համար իբր 25 միլիոն թալէռ յատկացուած է. այս ծախուց մեծագոյն մասն հողացուած է Շիգակոյի եւ իլլինոյի գրամատեարց եւ երկաթուղեաց ընկերութեանց ու առեւտրական հաստատութեանց կողմէ: Մեծ բաժին ունի նաեւ Միացեալ նահանգաց կառավարութիւնն: Հանդիսին վարչներու ակնկալութիւնք յոյժ մեծ են, եւ կը կարծուի թէ Հանդիսին ընկերութեան բաժնատեարց շահն յոյժ մեծ պիտի ըլլայ: Կը կարծուի թէ Մայիս մէկէն մինչեւ Նոյեմբեր մէկ օրական 500 հազար անձինք պիտի այցելեն կէս թալէռի վճարմամբ: Եթէ ակնկալութիւնք իրականանան, 45 միլիոն թալէռ պիտի գանձուի այցելունքէ. ի բաց առեալ այն միլիոններ՝ որ պիտի

հոսնն երկաթուղեաց ընկերութեանց գանձարաններու : Ամէնքն
կը հաւատան թէ Շիգակօ մեծապէս պիտի շահի այս գրեթէ
գիւցազնական գրեթէ յանդուգն ձեռնարկէն : Սպասենք :

ՇԻԳԱԿՕՅԻ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՔ

Շիգակօ իւր նպաստաւոր դրիւք եւ անցեալ պայծառ պատ-
մութեամբ յաջողեցաւ հանդիսին կեդրոնն ըլլալ ի հեճուկս Նիւ-
Եօրքի եւ այլ մեծ քաղաքաց ձգտմանց եւ մրցութեանց : Շի-
գակօ միացեալ նահանգաց կեդրոնական մետրափոլիտն կ'ա-
նուանի, եւ հիթէ երկաթուղեաց գծերը երակաց նմանցնէք,
Շիգակօ սիրտն է Մ. Նահանգաց, եւ ի նա կը հոսնն յԱրեւելից
եւ յԱրեւմտից, Հիւսիսէ եւ Հարաւէ երկրին կենսական տա-
րերք. ուստի Շիգակօ ամենայարմար վայրն էր այսպիսի համ-
աշխարհային հանդիսի մը : Շիգակօ սա առաւելութիւնն ալ
ունի, որ իւր բնակչաց 85 եւ ըստ այլոց 90 առ հարիւրն օտա-
րածին են. ուստի աշխարհի ամէն ժողովուրդ, Ճաբոնացիէն
մինչեւ Իրլանտացիք, Եւրփմացիէն մինչեւ Ափրիկեցիք եւ Հա-
րաւային Ամերիկացիք լաւ եւս կրնան ի հայրենիս համարել
զինքեանս ի Շիգակօ քան այլ ուրեք :

Հանդիսին բացումն տեղի պիտի ունենայ Մայիս մէկին ի ներ-
կայութեան Մր. Քլիվլընտի, Մ. Նահանգաց նախագահին,
Վէրէկուայի կոմսին՝ որ Քոլումպոսի զարմէն է, օտար պետութեանց
ներկայացուցչաց եւ հազարաւոր պաշտօնէից : Այս մասին ա-
ռանձինն կը գրեմ :

Կ. Մ. Մանուշեան

Շարայարեղի

